ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՊ-ԳՀԾՁԲ-02/20

ք. Երևան «14» 01 2020թ.

ՀՀ հաշվեքննիչ պալատը ի դեմս գլխավոր քարտուղար Հայկ Ավագյանի, որը գործում է ՀՀ հաշվեքննիչ պալատի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Օվնե» ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Ա.Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 9 538 540 (ինը միլիոն հինգ հարյուր երեսունութ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է *փաստացի մատուցված ծառայությունների* հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո կնքված լրացուցիչ համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված** չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում

նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[1] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

1 Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2 և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում է բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հաշվեքննիչ պալատ	**«Օվնե» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 43/10
ՀՎՀՀ 00061508	ՀՎՀՀ 00428675
Հ/Հ	Հ/Հ 1930069052700100
ՖՆ գործառնական վարչություն	Կոնվերսբանկ ՓԲԸ
_____ **Հ.Ավագյան**	_____ **Ա.Բաղդասարյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
« 14 » 01 2020թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-02/20 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված գնախաքննության համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՏՄ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	ընդհանուր քանակը	մատուցման	
						Հասցեն	Ժամկետը**
1	50111130/501	Համաձայն Հավելված 1.1-ի	դրամ	9 538 540	1	Կատարողի տեխնիկական ապասարկման կայան	Համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 360 օրացուցային օր, բայց ոչ ավել քան 25.12.2020թ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ հաշվեքննիչ պալատ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19
ՀՎՀՀ 00061508
Հ/Հ
ՖՆ գործառնական վարչություն

Հ. Ավագյան
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ

«Օվնե» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 43/10
ՀՎՀՀ 00428675
Հ/Հ 1930069052700100
Կոնվերսբանկ/ՓԲԸ

Ա.Բաղդասարյան
/ստորագրություն/

Կ.Տ.

Հավելված N 1.1
« 14 » 01 2020թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-02/20 ծածկագրով պայմանագրի

Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման՝ SU-1 (տեխնիկական զննման/դիագնոստիկա/), SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի

N	SU-1,SU-2 ծառայությունների և SU-3 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Ավտոմեքենաների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների					
		Չ/Բ 1					
		«Տոյոտա քեմրի» - 1 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը '2.4լ, շարժիչի հզորությունը՝ 167 ձիաուժ, գույնը՝սև, արտադրության տարեթիվ՝ 2007թ.	«Տոյոտա կորոլլա»- 2 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը '1.6լ, շարժիչի հզորությունը՝ 124 և 122 ձիաուժ, գույնը՝ սև, արտադրության տարեթիվ՝ 2008թ և .2017թ	«Նիսսան ալտիմա»- 1 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, շարժիչի հզորությունը՝ 182 ձիաուժ, գույնը՝սև, արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Նիսսան սենտրա» - 2 մեքենա թափքը՝ սեդան, շարժիչի աշխատանքային ծավալը '1.6լ, շարժիչի հզորությունը՝ 113 ձիաուժ, գույնը՝ մոխրաշականակագույն(1) և արծաթագունմետալիկ(2), արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Նիսսան X թրայլ»- 1 մեքենա թափքը՝ թեթև մարդատար, շարժիչի աշխատանքային ծավալը 2.5լ, շարժիչի հզորությունը՝ 170 ձիաուժ, գույնը՝ սև, արտադրության տարեթիվ՝ 2013թ.	«Հյունդայի»- 1 մեքենա թափքը՝ լաբորատոր միկրոավտոբուս, տիպարը H1, շարժիչի աշխատանքային ծավալը H1, շարժիչի հզորությունը ՝ 110 ձիաուժ, գույնը՝ մոխրագույն մետալիկ, արտադրության տարեթիվ՝ 2009թ.,
1	2	3	4	5	6	7	8
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը							
1	Շարժիչի հանում տեղադրում	65000	65000	65000	65000	65000	65000
2	Շարժիչի վերականգնում	144000	144000	144000	144000	144000	144000
3	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
4	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	20000	20000	20000	20000	20000	20000
5	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	33000	29000	29000	29000	35000	28000
6	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	72000	72000	72000	72000	72000	72000
7	Շարժիչի գլխիկի վերանորոգում	25000	25000	25000	25000	25000	25000
8	Փականի խցուկի փոխարինում	42000	42000	42000	42000	42000	42000
9	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	35000	35000	35000	35000	35000	35000
10	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000
11	Հրիչների փոխարինում DOHC	8000	8000	8000	8000	8000	8000
12	Ատամնավոր փոկի փոխարինում			35000	35000		

13	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	12000	12000	12000	12000	12000	12000
14	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	9000	9000	9000	9000	9000	9000
15	Մխոցային օղակների փոխարինում	41000	41000	41000	41000	41000	41000
16	Թափանիվի հանում և տեղադրում	30000	30000	30000	30000	30000	30000
2. Ղեկավարման, սնմանկայուղմանհամակարգ							
17	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
18	Յուղի պոմպի փոխարինում	9000	9000	9000	9000	9000	9000
19	Ղեկավարման բլոկի վերանորոգում	60000	60000	60000	60000	60000	60000
20	Օդի զտիչի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
21	Սրահի զտիչի փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
22	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	2000	2000	2000	2000	2000	2000
23	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	25000	25000	25000	25000	25000	25000
24	Վառելիքիմղիչի փոխարինում	15000	15000	15000	15000	15000	15000
25	Վառելիքի զտիչի փոխարինում	8000	8000	8000	8000	8000	8000
3. Սառեցման և արտածման համակարգ							
26	Հովհարի հանում և տեղադրում	12000	12000	12000	12000	12000	12000
27	կոնդիցիոների կոմպրեսորի փոխարինում	25000	25000	25000	25000	25000	25000
28	Ռադիատորի հանում և տեղադրում	18000	18000	18000	18000	18000	18000
29	Ռադիատորի վերանորոգում	58000	58000	58000	58000	58000	58000
30	Թերմոստատի փոխարինում	11000	11000	11000	11000	11000	11000
31	Ջրի պոմպի փոխարինում	18000	18000	18000	18000	18000	18000
32	Խլարարի հանում և տեղադրում	6500	6500	6500	6500	6500	6500
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
33	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	80000	75000	75000	75000	90000	75000
35	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	75000	60000	60000	60000	80000	75000
36	ԱՓՏ-ի վերանորոգում	150000	150000	150000	150000	150000	150000
37	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	15000	15000	15000	15000	15000	15000
5.Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ							
38	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում					45000	45000
39	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում,վերանորոգումով					90000	90000
40	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում					90000	90000
41	Կարդանային լիսեռի միջանկյալ					25000	22000

	կախոցի հանում ևտեղադրում						
6.Առջևի և հետևի կամրջակներ							
42	Կիսասռնու առանցքակալի փոխարինում	15000	15000	15000	15000	20000	15000
7. Կախոց							
43	Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում	12000	12000	12000	12000	15000	12000
44	Անվակունդի առանցքակալի փոխարինում	20000	20000	20000	20000	20000	20000
45	Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
46	Ձախ կամ աջ հոդակապի առանցքակալների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
47	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000	4000	4000	4000	4000	4000
48	Զսպանակի հանում և տեղադրում	5000	4000	4000	4000	4000	4000
49	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	12000	10000	10000	10000	10000	10000
50	մեղմիչի թասակի առանցքակալի փոխարինում	12000	12000	12000	13000	16000	12000
51	Ներքևի լծակի վռանների տեղադրում	15000	12000	12000	12000	12000	12000
52	Ներքևի լծակի վռանների փոխարինում	15000	12000	12000	12000	12000	12000
53	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	8000	8000	8000	8000	8000	8000
54	Գնդե հոդակապերի փոխարինում	15000	15000	15000	15000	15000	15000
55	Ծայրակաների հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000	4000
56	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000	4000
57	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	18000	10000	10000	10000	10000	10000
58	հետևի կայունարարի վռանների փոխարինում	10000	6000	6000	6000	6000	6000
59	հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000
60	Հետևի զսպանակի փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000
61	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	13000	13000	13000	13000	13000	13000
62	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում	12000		15000		12000	12000

63	Հետևի երկաթաձողի հանում և տեղադրում	10000	20000	12000	20000	10000	10000
64	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000	4000
65	Անվաքացքի կարգավորում	12000	12000	12000	12000	12000	12000
66	Զոդման աշխատանքներ 1 քառ.սմ համար	2000	2000	2000	2000	2000	2000
8.Ղեկային մեխանիզմ							
67	Ղեկային կալունի հանում և տեղադրում	45000	45000	45000	45000	45000	45000
68	Ղեկային կալունի վերանորոգում	60000	55000	50000	50000	50000	50000
69	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	25000	22000	22000	24000	28000	20000
70	ՂԿ-ի հոդակապերի հանում և տեղադրում	10000	7000	5000	5000	5000	5000
71	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	7000	7000	5000	5000	5000	5000
72	ղեկային մեղանիզի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
9. Արգելակային համակարգ							
73	Գլխ.գլանի հանում և տեղադրում	10000	10000	10000	10000	10000	10000
74	Արգելակային համակարգի օդահանում	5000	5000	5000	5000	5000	5000
75	Առջևի պահանգների հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000	5000
76	Հետևի պահանգների հանում և տեղադրում	5000	5000	5000	5000	5000	5000
77	Առջևի պահանգների վերանորոգում	40000	36000	36000	36000	48000	36000
78	Հետևի պահանգների վերանորոգում	40000	36000	36000	36000	45000	36000
79	Առջևի պահանգների ուղղորդիչի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000
80	Հետևի պահանգների ուղղորդիչի փոխարինում	3000	3000	3000	3000	3000	3000
81	Արգելակային փողրակի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
82	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
83	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
84	Հետևի կոճղակների փոխարինում			5000	5000		
85	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000

86	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	10000	10000	10000	10000	10000	10000
87	Արգելակային սկավառակի հղկում	7000	7000	7000	7000	7000	7000
88	ABS-ի հանում և տեղադրում	15000	12000	12000	12000	12000	12000
89	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	14000	14000	14000	14000	14000	14000
10.Էլեկտրասարքավորում							
90	Էլեկտրասարքավորման վերանորոգում	10000	10000	10000	10000	10000	10000
91	Գեներատորի հանում և տեղադրում	7000	7000	7000	7000	7000	7000
92	Գեներատորի վերանորոգում	15000	15000	15000	15000	15000	15000
93	Մեկնարկիչի հանում և տեղադրում	8000	8000	8000	8000	8000	8000
94	Մեկնարկիչի վերանորոգում	12000	12000	12000	12000	12000	12000
95	Առջևի լապտերի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000	4000
96	Հետևի լապտերի հանում և տեղադրում	4000	4000	4000	4000	4000	4000
97	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3000	3000	3000	3000	3000	3000
98	Ազդանշանի հանում և տեղադրում	6000	6000	6000	6000	6000	6000
99	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	15000	10000	10000	10000	10000	10000
100	Էլեկտրական տվիչների փոխարինում	6000	6000	6000	6000	6000	6000
101	Ղեկի ժապավենի փոխարինում	7000	7000	7000	7000	7000	7000
102	Վառոցքի կոճի փոխարինում	5000	5000	5000	5000	5000	5000
103	Վառոցքի մոմերի փոխարինում	4000	4000	4000	4000	4000	4000
104	Կոնդիցիոների լիցքավորում	15000	15000	15000	15000	15000	15000
105	Կոնդիցիոների վերանորոգում	35000	35000	35000	35000	35000	35000
11. Այլ ծառայություններ							
106	Անիվի հանում և տեղադրում	500	500	500	500	500	500
107	Անվադողի վերանորոգում	2500	2500	2500	2500	2500	2500
108	Անիվի բալանսավորում	2000	2000	2000	2000	2000	2000
109	Անիվի վալց	10000	10000	10000	10000	10000	9000
110	CO-զրոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	3000	3000	3000	3000	3000	3000
111	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	700	700	700	700	700	700
SU-1,SU-2 ծառայություններիևSU-2 ընթացքումօգտագործվողպահեստամասերիքսայուղերիևայլօժանդակնյութե							

րիանվանումները							
	1. Շարժիչ						
1	Բարձիկ	64000	60000	60000	68000	62000	60000
2	Շարժիչի գլխակի միջադիր	45000	40000	40000	40000	43000	40000
3	Միջադիր	14000	14000	14000	14000	20000	14000
2.Ղեկավարման, սնմանևյուղմանհամակարգ							
4	Յուղ շարժիչի CH-4 15W40 հանքային տուրբո դիզել 1լիտր	[redacted]					5000
5	Յուղ շարժիչի SN/CF 10W40 կիսասինթետիկ, 1լիտր	5500	5500	5500	5500	5500	5500
6	Յուղ շարժիչի SN/CF 5W40 սինթետիկ, 1լիտր	6500	6500	6500	6500	6500	6500
7	Յուղի զտիչ	5000	5000	5000	5000	5000	5000
8	Վառոցքի մոմ	5000	5000	5000	5000	6000	4000
9	Վառոցքի կոճ	25000	25000	25000	25000	25000	22000
10	Վառելանյութի զտիչ	15000	15000	15000	15000	15000	15000
11	Օդի զտիչ	9000	10000	10000	10000	10000	80000
12	Ծնկաձև լիսեռի տվիչ	37000	35000	35000	35000	44000	30000
13	Թթվածնի տվիչ	65000	62000	62000	62000	75000	60000
3. Սառեցման և արտածման համակարգ							
14	էլեկտրական հովհար	60000	60000	58000	58000	70000	49000
15	Ռադիատորի փողրակ	15000	15000	15000	15000	15000	15000
16	Թերմոստատ	20000	19000	19000	21000	22000	18000
17	Ջրի պոմպ	35000	32000	25000	25000	40000	25000
18	Փոկ	7000	7000	7000	7000	7000	7000
19	Սրահի զտիչ	11000	10000	10000	10000	15000	10000
20	Անուր (Խամուտ)	1500	1500	1500	1500	1500	1500
4.Կցորդում, ՓՏ և ԱՓՏ							
21	ԱՓՏ-ի զտիչ	16000	16000	16000	16000	20000	12000
22	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	7000	7000	7000	7000	7000	7000
23	ԱՓՏ յուղ,սինթետիկ, 1լիտր	9000	9000	9000	9000	9000	9000
24	Հերմետիկ	2500	2500	2500	2500	2500	2500
5. Կախոց—подвеска- peredok							
25	Ձախ կամ աջ հոդակապ	55000	55000	55000	50000	65000	48000
26	Ձախ կամ աջ հոդակապի փոշեթիկնոց	6000	6000	6000	6000	6000	6000
27	Անվակունդ	35000	35000	35000	35000	50000	25000
28	Անվակունդի խցուկ	8000	8000	8000	8000	12000	8000
29	Անվակունդի ներքին առանցքակալ	12000	12000	12000	12000	15000	11000

30	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	12000	12000	12000	13000	16000	11000
31	Ձախ կամ աջ հեղակապի խցուկ	8000	8000	8000	8000	9000	7000
32	Հարվածամեղմիչի թասակ	16000	16000	16000	15000	19000	14000
33	Հարվածամեղմիչի թասակի առանցքակալ	10000	10000	10000	10000	15000	11000
34	Առջևի հարվածամեղմիչ	48000	48000	48000	48000	65000	44000
35	Ներքևի լծակի վռան	10000	10000	10000	11000	12000	10000
36	Գնդե հոդակապ	14000	14000	14000	14000	18000	12000
37	Առջևի կայունարարի վռան	7000	7000	7000	7000	7000	7000
38	Առջևի կայունարարի կանգնակ	12000	12000	12000	12000	14000	11000
39	հետևի կայունարարի կանգնակ	12000	12000	12000	12000	14000	11000
40	Հետևի ցնցամեղմիչ	48000	48000	48000	48000	52000	39000
41	Աջ կամ ձախ ձգան	14000	14000	14000	14000	18000	12000
42	Ծայրակալ	12000	12000	12000	12000	14000	12000
6. Ղեկային մեխանիզմ							
43	Հիդրոուժեղարար	86000	79000	77000	86000	92000	74000
44	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	7000	7000	7000	7000	7000	7000
7.Արգելակային համակարգ							
45	Արգելակային փողրակ	4000	4000	4000	4000	4000	4000
46	Առջևի արգելակային կոճղակների հավաքածու	18000	18000	18000	18000	18000	14000
47	Հետևի սկավառակային կոճղակների հավաքածու	14000	14000	14000	14000	16000	14000
48	Հետևի թմբուկայն կոճղակների հավաքածու	[redacted]	[redacted]	8000	8000	[redacted]	[redacted]
49	Առջևի արգելակային սկավառակ	35000	35000	35000	36000	40000	29000
50	Հետևի արգելակային սկավառակ	32000	33000	33000	32000	40000	29000
51	ABS-ի տվիչ	25000	25000	25000	25000	32000	25000
52	Արգելակային հեղուկ, DOT-3 - 500գրամ	6000	6000	6000	6000	6000	6000
53	Արգելակային հեղուկ, DOT-4 - 500գրամ	7000	7000	7000	7000	7000	7000
8. Էլեկտրասարքավորում							
54	Գեներատորի դիոդային կամրջակ	25000	25000	25000	25000	32000	25000
55	Գեներատորի ռելե	14000	14000	14000	14000	18000	14000

56	Գեներատորի առանցքակալ	15000	15000	15000	15000	15000	15000
57	Գեներատորի խարիսխ	30000	30000	30000	30000	36000	30000
58	Գեներատորի առջևի իրան	12000	12000	12000	12000	12000	10000
59	Գեներատորի հետևի իրան	10000	10000	10000	10000	10000	10000
60	Գեներատորի փաթույթ	25000	25000	25000	25000	25000	25000
61	Գեներատորի փոկանիվ	8000	8000	8000	8000	8000	8000
62	Մեկնարկիչի ռելե	15000	15000	15000	15000	15000	15000
63	Մեկնարկիչի ածուխ	6000	6000	6000	6000	6000	6000
64	Բենդեքս	14000	14000	14000	14000	16000	14000
65	Մեկնարկիչի կցորդիչ (ավտոմատ)	26000	26000	25000	26000	30000	26000
66	Առջևի լապտերի լամպ	10000	10000	10000	10000	10000	10000
67	Հետևի լապտերի լամպ	2000	2000	2000	2000	2000	2000
68	Առջևի թարթիչի լապտերի լամպ	2000	2000	2000	2000	2000	2000
69	Հետևի թարթիչի լապտերի լամպ	2000	2000	2000	2000	2000	2000
70	Հակամշուշային լապտերի լամպ	3000	3000	3000	3000	3000	3000
71	Արգելակային լապտերի լամպ	2000	2000	2000	2000	2000	2000
72	Էլեկտրական տվիչ	7500	7500	7500	7500	7500	7500
73	Վառոցքի մոմի ծայրակալ	25000	25000	25000	25000	28000	24000
74	Ապակեմաքրիչի խոզանակներ	5000	5000	5000	5000	5000	5000

1. Կատարողը պարտավոր է մինչև սպասարկումը, պատվիրատուի ուղարկած ավտոմեքենան զննել վարորդի ներկայությամբ և պատվիրատուին տրամադրել թերությունների ակտ՝ որում պետք է ֆիքսված լինեն ավտոմասերի և ծառայությունների գները(առանձին): Սպասարկման օրն ու ժամը՝ համաձայն երկողմ պայմանավորվածության:

2. Ծառայությունները պետք է մատուցվեն պատվիրատուի գրավոր հայտի (գրության) հիման վրա՝ տրանսպորտային միջոցը կատարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասերի փոխարինման, իսկ պահեստամասերի փոխարինման դեպքում երկու աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում պատվիրատուի համաձայնությամբ կարող է սահմանվել ծառայությունների մատուցման այլ ժամկետ:

3. Ծառայության մատուցման ժամկետների խախտումները, անորակ սպասարկումը, ոչ ժամանակին պահեստամասերի տրամադրումը կհամարվի ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարում, որը կարող է դառնալ կնքված պայմանագրի լուծման պատճառ:

4. Կատարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել տվյալ ավտոմեքենան արտադրող ընկերության կողմից արտադրված պահեստամասեր և քսայուղեր: Սպասարկվող ավտոմեքենաներին տեղադրված պահեստամասերը պետք է ունենան առնվազն 6 ամսվա երաշխիք: Մեքենայի շարժիչների վերանոգման երաշխիքային ժամկերը՝ առնվազն 12 ամիս, փոխանցման տուփերի,կամրջակների և ղեկային կալունի վերանորոգման երաշխիքային ժամկետը՝ առնվազն 6 ամիս:

5. Տեխսպասարկման կայանը պետք է լինի Երևան քաղաքում՝ հետևյալ պայմաններով.

ա/ հագեցած լինի առնվազն 3 ամբարձիչներով՝ առնվազն երեք տոննա բարձրացնելու կարողությամբ և բոլոր ծառայությունների մատուցման հնարավորությամբ:
բ/ապահովված լինի փակ և պահպանվող տարածքով՝ մինչև 5 և ավելի ավտոմեքենայի համար:
գ/ ունենա նվազագույնը 3.5 տոննա բեռնատարողությամբ ավտոքարշակ, որը պահանջի դեպքում

- ք.Երևանում մեկ ժամվա ընթացքում, պետք է հասնի խափանված ավտոմեքենայի գտնվելու վայրը և անվճար տեղափոխի վերանորոգման կայան
- իսկ մայրաքաղքից դուրս՝ առնվազն 6 ժամվա ընթացքում խափանված մեքենան տեղափոխել վերանորոգման կայան: Ընդ որում տեղափոխման արժեքը չի կարող գերազանցել 1 կմ-ի համար 700 դրամը:

դ/ ունենա բոլոր ծառայությունների մատուցման համար որակյալ մասնագետներ:

6. Ծառայությունների մատուցման վերոնշյալ պայմանների չապահովման դեպքում կատարողը պարտավոր է գրավոր կամ բանավոր տեղեկացնել պատվիրատուին՝ նշելով պատճառները և դրանց մատուցման ստույգ ժամկետ(ներ)ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ հաշվեքննիչ պալատ	**«Օվնե» ՍՊԸ**
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Բաղրամյան 19	Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մյասնիկյան 43/10
ՀՎՀՀ 00061508	ՀՎՀՀ 00428675
Հ/Հ	Հ/Հ 1930069052700100
ՖՆ գործառնական վարչություն	Կոնվերսբանկ ՓԲԸ
_____ **Հ.Ավագյան**	_____ **Ա.Բաղդասարյան**
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված 2
« 14 » 01 2020թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-02/20 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 14 » 01 2020թ. կնքված
ՀՊ-ԳՀԾՁԲ-02/20 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն